Երրորդ հաղորդում

Աստծու զոհասեղանի՝ ողջակեզի զոհասեղանի վերակառուցումը

Գրվածքների ընթերցում. Ղտց 1:3-11, 13-14, 17, 6:9, 12ա, 13, Թվց 28:2, Եզր 1:2-3, 5, 3:2-3, 6ա, Սղմ 43:4ա, Եփս 5:2, Հռմ 12:1

I. «Նրանք կառուցեցին Իսրայելի Աստծու զոհասեղանը՝ վրան ողջակեզներ մատուցելու համար, ինչպես որ գրված է Մովսեսի՝ Աստծու մարդու օրենքում»՝ Եզր 3:2բ.

Ա. Տան վերականգնման համար մեզ անհրաժեշտ է զոհասեղանի վերականգնումը՝ 1:2-3, 5, 3:2-3.

1. Առաջին բանը, որ պետք է վերականգնվի եկեղեցական կյանքի համար, զոհասեղանն է՝ Հռմ 12:1.
   - ա. Նախքան կկարողանանք եկեղեցական կյանք ունենալ, պետք է ամեն ինչ դնենք զոհասեղանին՝ Սղմ 43:4ա:
   - բ. Մենք պետք է այն ամենը, ինչ ունենք, այն ամենը, ինչ մենք ենք և այն ամենը, ինչ կարող ենք անել, դնենք զոհասեղանին Աստծու բավարարության համար. սա եկեղեցական կյանքի սկիզբն է:
2. Խնդիրն այն է, որ թեև Բաբելոնից վերադարձել ենք Երուսաղեմ, Երուսաղեմում, հնարավոր է, դեռ շատ բաներ ենք պահում մեր սեփական շահերի համար. մենք ամեն ինչ չենք դրել զոհասեղանին Աստծու շահերի և Աստծու բավարարության համար՝ Հռմ 12:1.
   - ա. Մենք չպետք է Երուսաղեմ վերադառնանք, այդուհանդերձ շարունակենք նույն կյանքը վարել, ինչ Բաբելոնում էր:
   - բ. Կյանքը Երուսաղեմում պետք է բացարձակապես Տիրոջ շահերի համար լինի:

Բ. Ողջակեզի զոհասեղանը Քրիստոսի խաչի նախատիպն է՝ Ելց 27:1, 40:6, Եբր 13:10.

1. Իր տնտեսության մեջ Աստված մեզ միայն մեկ անձ է տալիս՝ Քրիստոսին, և միայն մեկ ճանապարհ՝ խաչը՝ Ա Կրթ 2:2.
   - ա. Խաչն Աստծու գործողության կենտրոնն է Նրա տնտեսության մեջ՝ Գղտ 1:4, 2:19-21, 3:1, 13, 5:24, 6:14:
   - բ. Աստված ամեն բան ղեկավարում է խաչի միջոցով և բոլոր խնդիրները լուծում է խաչի միջոցով՝ Կղս 1:20-22, 2:11-15:
2. Խաչը բոլոր հոգևոր փորձառությունների հիմքն է, հողը, սկզբնական գործոնը. բոլոր հոգևոր փորձառությունները սկսվում են խաչից՝ Գղտ 2:20, 6:14, Ա Կրթ 2:2.
   - ա. Որպեսզի հոգևոր առումով առաջ ընթանանք, պետք է ամեն օր խաչով անցնենք՝ Մտթ 10:38, 16:24, Ղկս 14:27:
   - բ. Եթե ուզում ենք պատշաճ եկեղեցական կյանք ունենալ, պետք է փորձառաբար ապրենք խաչը՝ Եփս 2:14-16:

գ. Խաչի միջոցով մենք պետք է ոչինչ դառնանք, ոչինչ չունենանք, ոչինչ չկարողանանք անել. հակառակ դեպքում այն, ինչ ենք, ինչ ունենք և ինչ կարողանում ենք անել, Քրիստոսի փոխարինումը կդառնա՝ Ա Կրթ 1:17-18, 23:

II. «Նրանք սկսեցին ողջակեզներ մատուցել Եհովային»՝ Եզր 3:6ա.

Ա. Ողջակեզը խորհրդապատկերում է Քրիստոսի՝ բացարձակորեն Աստծու բավարարության համար լինելը՝ Ղտց 1:3-9.

1. Ողջակեզը, որն ամբողջությամբ Աստծու բավարարության համար էր, Քրիստոսի նախատիպն է՝ որպես Աստծու հաճության և բավարարման՝ Եփս 5:2:
2. Ողջակեզը Քրիստոսի նախատիպն է ոչ միայն այն իմաստով, որ Նա ապրում էր Աստծու համար կատարյալ ու բացարձակ կյանքով, այլև այն իմաստով, որ նա այն կյանքն է, որն Աստծու մարդկանց թույլ է տալիս նման ապրելակերպ ունենալու՝ Հվի 5:19, 30, 6:38, 7:18, 8:29, 14:24, Բ Կրթ 5:15, Գղտ 2:19-21:
3. Ողջակեզը Քրիստոսն Ինքն է, իսկ մենք մեկ ենք Նրա հետ. ուստի ողջակեզը նաև մեր միասնությունն է Քրիստոսի հետ՝ Ա Կրթ 6:17:

Բ. Ողջակեզն Աստծու կերակուրը լինելու համար է, որն Աստված կարող է վայելել ու դրանով բավարարվել՝ Թվց 28:2.

1. Թեև Աստված ամենակարող է, Նա չի կարող Իր համար ուտելու ինչ-որ բան ապահովել. Նրա կերակուրը պետք է Նրա ժողովրդից ելնի՝ խ. 2:
2. Քրիստոսն Աստծու կերակուրն է, բայց նա Աստծու կերակուրն անմիջականորեն չէ. Քրիստոսն Աստծու կերակուրն է, որ մենք ենք մատուցում Աստծուն:

Գ. Որպես «ողջակեզ» թարգմանված եբրայերեն բառը նշանակում է «մի բան, որը բարձրանում է», և այն նշանակում է մի բան, որ բարձանում է դեպի Աստված. այս բարձրանալը վերաբերում է Քրիստոսին՝ Ղտց 1:3, 10, 14.

1. Միակ բանը, որ կարող է երկրից դեպի Աստված բարձրանալ, այն կյանքն է, որ Քրիստոսն ապրում էր, որովհետև Նա եզակի անձն է, ով ապրում է բացարձակորեն Աստծու համար եղող կյանքով՝ Հվի 6:38.
   ա. Որպես մեր ողջակեզը՝ Քրիստոսը լիովին ու ամբողջությամբ Աստծու համար է, բացարձակորեն Աստծու համար՝ 4:34, 5:30, Եբր 10:8-10:
   բ. Այն, ինչ Տեր Հիսուսն էր, ինչ Նա խոսում էր, և ինչ Նա անում էր, լիովին ու ամբողջությամբ Աստծու համար էր՝ Հվի 6:38, 5:17, 36, 43, 8:28, 10:25, 12:49-50:
2. Մեր ձեռքերը դնելով Քրիստոսի՝ որպես ողջակեզի վրա, մենք միանում ենք Նրան՝ Ղտց 1:4, Ա Կրթ 6:17:
3. Քրիստոսի՝ մեր մեջ ապրելու հետ մեկտեղ Նա մեր մեջ կրկնում է

այն կյանքը, որը Նա ապրեց երկրի վրա՝ ողջակեզի կյանքը՝ Գղտ 2:20:

Դ. Ողջակեզը «բավարարող անուշահոտություն է Եհովային»՝ Ղտց 1:9, 13, 17.

1. Որպես «բավարարող անուշահոտություն» թարգմանված եբրայերեն արտահայտությունը տառացիորեն նշանակում է «հանգստի կամ բավարարության բուրմունք»՝ խ. 9:
2. Բավարարող անուշահոտությունը բավարարություն, խաղաղություն ու հանգիստ բերող բուրմունք է. այդպիսի բավարարող անուշահոտությունը վայելք է Աստծու համար:
3. Քանի որ Քրիստոսն ապրում է մի կյանքով, որը լիովին ու ամբողջությամբ Աստծու բավարարության համար էր, Նրա ապրելակերպը բավարարող անուշահոտություն էր՝ քաղցր բուրմունք, որ բարձրանում է Աստծու մոտ Նրա հաճության ու բավարարության համար՝ Եփս 5:2:

III. Ղևտացվոց գրքում հիշատակված առաջին ընծան ոչ թե մեղքի զոհն է կամ հանցանքի զոհը, այլ ողջակեզը՝ 1:3.

Ա. Մեզ անհրաժեշտ է Քրիստոսը նախ որպես մեր ողջակեզը, որովհետև Աստծու առջև մեր նախնական դիրքը՝ Աստծու հետ ունեցած մեր առաջին խնդիրը, ոչ թե զանցանքների հարցն է, այլ Աստծու համար չլինելու.

1. Աստված մեզ ստեղծել է, որպեսզի արտահայտենք Նրան և ներկայացնենք Նրան՝ Ծնդ 1:26:
2. Աստված մեզ ստեղծել է, որպեսզի լինենք Նրա համար. Նա մեզ չի ստեղծել մեզ համար, բայց, ընկած մարդիկ լինելով, մենք ապրում ենք մեզ համար, ոչ թե Նրա:

Բ. Ողջակեզը նշանակում է, որ որպես մարդիկ, ովքեր ստեղծվել են Աստծու կողմից Նրան արտահայտելու և ներկայացնելու համար, մենք չպետք է լինենք Աստծուց զատ մեկ այլ բանի համար՝ խխ. 27-28, հմմտ Սղմ 73:25, Մրկ 12:30:

Գ. Մենք պետք է գիտակցենք, որ բացարձակորեն չենք Աստծու համար, և որ ինքներս մեր մեջ մենք չենք կարող բացարձակորեն Աստծու համար լինել, ուստի պետք է ընդունենք Քրիստոսին՝ որպես մեր ողջակեզի՝ Ղտց 1:3-4:

IV. Մշտական ողջակեզի կյանք ապրել նշանակում է կենդանի զոհ լինել՝ Հռմ 12:1.

Ա. Ողջակեզը մեր նվիրաբերման նախատիպն է, մեզ Աստծուն որպես կենդանի զոհ մատուցելու նախատիպը. նվիրաբերման նշանակությունը մեզ Աստծուն որպես կենդանի զոհ մատուցելն է՝ Ղտց 1:3-4, 8-9, 6:9, 12ա, 13, Հռմ 12:1:

Բ. Հին Կտակարանի ամենօրյա ողջակեզն այն բանի նախատիպն է, որ

Նոր Կտակարանում մենք, ովքեր պատկանում են Աստծուն, պետք է ամեն օր մեզ մատուցենք Աստծուն՝ Թվց 28:3-8:

Գ. Այսօր մեր քրիստոնեական կյանքում և եկեղեցական կյանքում մշտական ողջակեզ է անհրաժեշտ՝ Ղևտ 1:3-4, 8-9, 6:9, 12ա, 13:

V. Մենք պետք է երկրպագենք Հայր Աստծուն Քրիստոսով՝ որպես ողջակեզով, Աստծու բավարարման համար, որպեսզի իրականացնենք Նրա ցանկությունը՝ 1:3, 9բ, Թվց 28:2, Հվի 4:23-24.

Ա. Աստված ուզում է, որ երկրպագենք Իրեն Քրիստոսով՝ որպես ընծաների իրականությամբ. ընծաներն Աստծուն հաճեցնելու և Նրան ուրախացնելու համար են՝ խխ. 23-24:

Բ. Պատշաճ երկրպագությունը կապված է Աստծուն Քրիստոսով՝ որպես ողջակեզով, բավարարելու հետ՝ Ա Պտ 2:5, Հվի 4:34, 5:30, 8:29.

1. Երբ երկրպագում ենք Հորը Քրիստոսով՝ որպես ողջակեզի իրականությամբ, Աստծու մոտ Իրեն հաճելի անուշահոտություն է ելնում Նրա բավարարման համար՝ Ղևտ 1:9, Հվի 4:23-24:
2. Քանի որ Աստված բավարարվում է Նրան բերած Քրիստոսի մեր ընծայով՝ որպես ողջակեզի իրականությամբ, Նա Իր քաղցր ընդունելությունն է ցուցաբերում մեր հանդեպ. դա ողջակեզի նշանակությունն է՝ Թվց 28:2:

© 2022 Living Stream Ministry